Մուլեյլի

Այ մուլեյլի, մուլեյլի, մուլեյլի,
Ջա՛ն, մուլեյլի, մուլեյլի, մուլեյլի:
Այ մուլեյլի, մուլեյլի, մուլեյլի,
Գնա սերդ վայելի, մուլեյլի:

Քարի տակին պաղ աղբուր, մուլեյլի,
Արծաթի թաս, ոսկի ջուր, մուլեյլի,
Ես կըվառիմ քո սիրուն, մուլեյլի,
Մի թաս ուզեմ, էրկուս տուր, մուլեյլի:

Այ մուլեյլի, մուլեյլի, մուլեյլի,
Ջա՛ն, մուլեյլի, մուլեյլի, մուլեյլի:
Այ մուլեյլի, մուլեյլի, մուլեյլի,
Գնա սերդ վայելի, մուլեյլի:

Ոսկե մատնիք մատներիս, մուլեյլի,
Շողքըն ընկավ երեսիս, մուլեյլի,
Աքլոր, շուտով մի կանչի, մուլեյլի,
Անքուն կանես իմ յարիս, մուլեյլի:

Այ մուլեյլի, մուլեյլի, մուլեյլի,
Ջա՛ն, մուլեյլի, մուլեյլի, մուլեյլի,
Այ մուլեյլի, մուլեյլի, մուլեյլի,
Գնա սերդ վայելի, մուլեյլի:

Էսօր նորը նորել է, մուլեյլի,
Նորել է՝ բոլորել է, մուլեյլի,
Յար, քո լուսնակ երեսից, մուլեյլի,
Իմ սիրտը մոլորել է, մուլեյլի:

Այ մուլեյլի, մուլեյլի, մուլեյլի,
Ջա՛ն, մուլեյլի, մուլեյլի, մուլեյլի:

Այ մուլեյլի, մուլեյլի, մուլեյլի,
Գնա սերդ վայելի, մուլեյլի: